

Տ. Արարատ քահանա Պողոսյան

ԳՅՈՒՏ ԱՎԱԳ ՔԱԿԱՆԱ ԱՂԱՆՅԱՆՑԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (Համառոտ ուրվագիծ)

Բանալի բառեր - հայագետ, քահանա, Հայ եկեղեցի, մանկավարժ, հրատարակիչ, «Լումա» ամսագիր, «Դիվան հայոց պատմության» մատենաշար:



ԺԹ դարի հայ մշակույթի և հայագիտության զարգացման ասպարեզներում իրենց ուրույն և պատվավոր տեղ ունեն հայ եկեղեցականները՝ հոգևոր, մշակութային, մանկավարժական, հրատարակչական, պատմաբանասիրական, ինչպես նաև քաղաքական և հասարակական գործունեությամբ ու այլ բնագավառներում ունեցած հարուստ վաստակով: Նրանց շարքում առաջիններից մեկը **Տեր Գյուտ ավագ քահանա Աղանյանցն** է, ով ապրել ու գործել է Թիֆլիսում:

Պետք է նշել, որ հարուստ ու բազմաբնույթ է այս նշանավոր մշակութային գործչի, մանկավարժի, գրողի, թարգմանչի, բանասերի, պատմաբանի, հրատարակչի, խմբագրի և եկեղեցական ու հասարակական գործչի ժառանգությունը, որի ուսումնասիրմամբ և ըստ արժանվույն գնահատմամբ վերջին տասնմյակներին գրեթե ոչ ոք չի զբաղվել¹, թեև պետք է ասել, որ իր ժամանակին շատ բարձր է գնահատվել նրա գործունեությունը:

Արդարության դեմ չմեղանչելու համար պետք է նշել, որ այսօր պատմաբանները և բանասերները հաճախ են իրենց հետազոտություններում օգտագործում և հարգանքով խոսում հատկապես Աղանյանցի «Դիվան հայոց պատմության» դիվանական վավերագրերի հարուստ մատենաշարի մասին, որը սկսվել է հրատարակվել 1890 թվականից և շարունակվել մինչև 1917 թվականը²:

Ոչ պակաս սիրված և փնտրված է «Լումա» ամսագիրը (1896-1912)³: Բավական է միայն հիշել, որ հանդեսին աշխատակցել են Կարապետ Եգյանը, Պերճ Պռոշյանը, Շիրվանզադեն, Մուրացյանը, Վրթանես Փափազյանը, Իսահակ Հարությունյանը, Գարեգին Ենգիբարյանը, Մինաս Բերբերյանը, Քաջբերունին (Գաբրիել Տեր-Հովհաննիսյան), Նիկողայոս Քարամյանը, Երվանդ Շահագիզը, Մաղաքիա արք. Օրմանյանը և նման հեղինակավոր և աչքի ընկնող շատ ու շատ աշխարհական գիտնականներ և հոգևորականներ, որոնց շնորհիվ ամսագիրն իր պատմաբանասիրական և եկեղեցական հարուստ բովանդակությամբ դարձավ ժամանակի ամենաճանաչված ու հարգված հայկական պարբերականներից մեկը:

Արժանին մատուցելով՝ «Տարագ»-ի խմբագիր Տ. Նազարյանը 1901 թվականին Գյուտ Աղանյանցի գրական-հասարակական գործունեության 25-ամյակի առթիվ գրում

¹ Պետք է նշել, որ այս հեղինակով և նրա ժառանգությամբ մասնակիորեն զբաղվել են լուսահոգի Տ. Ջավեն արք. Հակոբյանը (տես **Արման սրկ. Հակոբյան**, «Տ. Գյուտ ավագ քահանա Աղանյանց. կյանքը, հոգևոր-հասարակական գործունեությունը, գիտագրական ժառանգությունը», ԳԳԵ-ի ավարտաճառ, Ս. Էջմիածին, ամսիպ, 2003) և Սամղոռ Բեթբուդյանը, որի ՀԱԱ-ում պահվող անձնական ֆոնդում առկա է ձեռագիր ամսիպ ուսումնասիրություն՝ նվիրված Գյուտ ավ. քին. Աղանյանցին, որից մեծապես օգտվել է վերոնշյալ հեղինակը, ինչպես նաև մենք (տես ՀԱԱ, ֆ. 1734, ց. 1, գ. 24, ք. 566, ք. 1-90):

² Մատենաշարի ամբողջական շարքի (Ա-ԺԳ հատորներ) թվային տարբերակը տես <http://serials.flib.sci.am/openreader/test/index.html>:

³ Ամսագրի ամբողջական (1896-1912 թթ.) թվայնացված տարբերակը տես <http://www.flib.sci.am/eng/luma/Main.html>:

էր. «Մեր արդի քահանաների մէջ Տ. Գիւտ աւագ քահանա Աղանեանցը մի բացառութիւն է իր յարատև և ժրաջան աշխատասիրութեամբ հայ գրական անդաստանում»¹:

Գյուտ Աղանյանցը սիրվել և բարձր է գնահատվել նաև ժամանակի Հայոց Հայրապետների կողմից:

Ցավով պիտի նշել, որ նշանավոր մշակութային գործչի հոգևոր-գիտական ժառանգության ամբողջական ուսումնասիրությունը տակավին կատարված չէ, նույնիսկ Մայր Աթոռի պաշտոնական «Էջմիածին» ամսագրում չենք գտնում գեթ մեկ հոդված, որ նվիրված լինի նրա գործունեությանը և կամ գրական ժառանգության արժեվորմանը: Կարծում ենք, որ այս հարցում առավելապես նախաձեռնող և կազմակերպողը պիտի լինեին Մայր Աթոռի համապատասխան կառույցները:

Այսօր, երբ մեծ է հետաքրքրությունը Հայ Եկեղեցու պատմության նկատմամբ, անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել ու արժեվորել նաև Գյուտ Աղանյանցի արդյունաշատ գործունեությունը՝ ժամանակի հասարակական-քաղաքական, հրատարակչական-եկեղեցական կյանքի ընդհանուր համապատկերում: Ահա այս պատճառով է, որ մեր առջև խնդիր ենք դրել հոդվածաշարերով անդրադառնալ նրա բազմաբովանդակ գործունեությանը, որ կարևոր դեր ունի Հայ Եկեղեցու պատմության նոր շրջանի ուսումնասիրման մեջ:

Տ. Գյուտ ավագ քահանա Աղանյանցը (ավագանի անունով՝ Հարություն Տեր-Առաքելյան) ծնվել է հայաշատ Թիֆլիսում 1856 թվականի մարտի 1-ին: Պահպանվել է նրա ծննդյան վկայականը՝ տրված Վրաստանի և Իմերեթի թեմական կոնսիստորիայից. «...սույնը տրվում է սարկավագ Հարություն Առաքելյանցի (Աղանյանցի) դիմումի համաձայն առ այն, որ ինչպես երևում է Թիֆլիսի հայկական վանքի տաճարի 1856 թ. չափաբերական մատյանի 1-մասի 21-րդ հոդվածի՝ Ելիզավետա Հովհաննեսովայի հետ Կարապետ Առաքելյանցի օրինական ամուսնությունից ծնվել է արու զավակ՝ հազար ութհարյուր հիսունվեց թվականի մարտի մեկին, որը նույն ամսին կնքվել է քահանա Մարկոս Տեր-Սարգսյանի կողմից, և սուրբ կնքման ժամանակ նրան տրվել է Հարություն անունը, կնքահայրն էր Աստվածատուր Գաբրիելյանցը...»²:

Պատանի Հարությունն իր սկզբնական կրթությունն ստացել է Տիրուհի Մամիկոնյանի մասնավոր դպրոցում՝ աշակերտելով հայ անվանի մանկավարժ Գարեգին Մուրադյանցին՝ Հայ Եկեղեցու ապագա նշանավոր գործիչ Մելքիսեդեկ արքեպիսկոպոսին: Այնուհետև 1865 թվականին ընդունվել է և 1878 թվականին բարձր գնահատականներով ավարտել Ներսիսյան դպրոցը, որտեղ այդ շրջանում դասավանդում էին հայ հոգևորականության և մտավորականության լավագույն ներկայացուցիչներից շատերը, այդ թվում նշանավոր թարգմանիչ և մանկավարժ Գ. Բարխուդարյանը, Գաբրիել ավագ քահանա Պատկանյանը, Ղևոնդ քահանա Խարազյանցը, Սուքիաս վրդ. Պարզյանցը, Ստեփանոս Պալասանյանը, Պետրոս Սիմոնյանը, Ամիրան Մանդինյանը³ և ուրիշներ: Դպրոցում տեսուչներ են եղել բժիշկ Հարություն Հովհաննիսյանը (1864-1865), Հովսեփ Փունդյանը (1865-1867), Հայկ

¹ «Տարագ», 1902, №42:

² ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 4, թ. 1 (ծեռագիր, բնագիր, թարգմանություն ուսերենից):

³ ՀԱԱ, ֆ. 2, ց. 1, գ. 32:

Էլիմիրոյանը (1867-1869), Ստեփանոս Նազարյանցը (1869-1872), Հասան Ջալալյանը (ժամանակավոր, 1872-1873):

Ուսումն ավարտելուց հետո Աղանյանցն սկսել է ուսուցչությամբ զբաղվել և ծավալել է արդյունավետ գործունեություն: Դեռևս Ներսիսյան դպրոցում սովորելու տարիներին ձևավորվել էր նրա հոգևոր աշխարհը: Աղանյանցը, երբ դեռ նոր էր առաջին քայլերն անում մանկավարժության բարդ և դժվարին աշխարհում, մեծ ցանկություն ուներ հոգևոր կոչում ստանալու: Այդ նպատակով դիմում է Վրաստանի հայոց վիճակային կոնսիստորիային. «Ի մանկութենէ ունելով զդիտաւորութիւն մտանելոյ ի հոգևոր կոչումն, պատրաստեցի զանձն իմ չափաւոր ուսմամբք սրբազան և արտաքին գիտութեանց ի Ներսիսեան Ազգային հոգևոր դպրոցի. ուստի ընդ այսմ ներկայացնելով Ատենիդ զվկայագիր ուսման իմոյ տուեալն ինձ ի հոգաբարձութենէն քաղաքին Տփլիսոյ յ8-ն մայիսի 1871 ամի ընդ համարաւ 203, խոնարհաբար խնդրեմ ընկալնուլ զիս ի հոգևոր կոչումն և համաթուել ի կարգս ստորին եկեղեցական պաշտօնէից վանաց Մայր Եկեղեցւոյ»¹:

1875 թվականին Վրաստանի և Իմերեթի թեմական առաջնորդ, նշանավոր պատմաբան և բանասեր Մակար արքեպիսկոպոս Բարխուդարյանը Հաղպատի վանքում նրան դպիր է ձեռնադրում²: Հարություն դպիրը Թիֆլիսի նշանավոր Հավլաբար թաղամասի Ս. Մինաս եկեղեցու մոտ մի մասնավոր ուսումնարան է բացում և սկսում դասավանդել, դասագրքեր պատրաստել՝ զարկ տալով աշակերտների մտավոր, բարոյական և կրոնական դաստիարակությանը:

Սկսած 1876 թվականից նա ուսուցչի պաշտոն է ստանձնում նաև Ներսիսյան դպրոցում, որտեղ մատչելի լեզվով ու շարադրանքով իր դասավանդած առարկայի միջոցով նպաստում է աշակերտների կրոնա-բարոյական դաստիարակությանը: Գյուտ Աղանյանցն իր ոգեշունչ մասնակցությունն է բերում նաև Թիֆլիսի Ս. Գայանյան հայ օրհորդաց միջնակարգ ուսումնարանի աշակերտության դաստիարակության գործին: 1880 թվականի հունիսի 20-ին, քահանա ձեռնադրվելու պատճառով, Աղանյանցը դիմում է գրում ուսումնարանի տեսչին, թե ձեռնադրության պատճառով. «անկարող եմ լինում շարունակելու ուսուցչութիւնս դպրոցիդ մէջ, վասնորոյ առաջիկայ սեպտեմբերի մէկից ինձ հրաժարուած համարիի ուսուցչական պաշտօնից»³:

1879 թվականին Հարություն դպիրը ձեռնադրվում է սարկավագ, իսկ մեկ տարի հետո, Ս. Էջմիածնի Սինոդի հրամանով Ախլցխա քաղաքի Ս. Փրկիչ եկեղեցում ձեռամբ Տ. Գրիգոր արքեպիսկոպոս Սարգսյանի ձեռնադրվում է քահանա վերանվանելով Տեր Գյուտ⁴:

Գյուտ Աղանյանցի գրական-ստեղծագործական գործունեությունը սկսվում է 1875 թվականից, երբ մեկը մյուսի հետևից նրա հոդվածները տպագրվում են «Մեղու Հայաստանի» թերթում: Այդ հոդվածները հավաստում էին, որ Աղանյանցը որպես գրող, մանկավարժ և հրապարակախոս արդեն կայացել է: Սկզբից ևեթ նրա գրածները վերաբերում էին մանկական դաստիարակությանը, երեխաների հոգսերին և կարիքներին: Զգալով հայ իրականության մեջ մանկական գրականության պակասը՝ նա ձեռնամուխ եղավ մանկական գրականության թարգմանությանը և կարճ ժամանակի

¹ ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 2, թ. 1:

² ԱճԴ, թ. 2:

³ ԱճԴ, գ. 5, թ. 1:

⁴ ԱճԴ, գ. 2, թ. 3:

ընթացքում հայկական բոլոր ուսումնարանների սաներն արդեն ունեին իր աշխատասիրությամբ հրատարակված հանրամատչելի և հետաքրքիր բովանդակությամբ գրքույկներ, որոնք մեծ դեր խաղացին նրանց կրթական մակարդակի բարձրացման և գրական ճաշակի ձևավորման գործում:

Տ. Գյուտ ավ. քին. Աղանյանցը 1889-1903 թթ. հրատարակել է պատի ամենօրյա հայերեն օրացույց, որն առաջինն էր ռուսահայ իրականության մեջ, որից այնուհետև օրինակ վերցրեցին հայ մշակույթի անվանի երախտավորները՝ Ա. Գուլամիրյանը, Մ. Չմշկյանը, Կ. Ափինյանը, Է. Թոփչյանը և այլք:

1896 թվականին Ամենայն Հայոց Կաթողիկոս Խրիմյան Հայրիկի հաճնարարությամբ նա գործուղվում է Կ. Պոլիս՝ Մատթեոս արքեպիսկոպոս Իզմիրլյանի մոտ: Հենց այդ ժամանակ էլ նրա համար բարեպատեհ առիթ է ստեղծվում ոչ միայն շրջագայելու, այլև օգտվելու Պատրիարքարանի դիվանից և Հովհաննես ավ. քին. Մկրյանի հարուստ գրադարանից: Այդ օրերին նա կարողացավ մեծաքանակ նյութեր հավաքել հետագա հրատարակությունների համար: Կ. Պոլսից վերադարձին նա անցնում է Գերմանիա և Կաթողիկոսի հանձնարարությամբ Մայր Աթոռի տպարանի համար գնում ձուլարան ու տպագրական մեքենաներ: Տարիներ անց, նա այս առիթով գրում է. «1896 թուի գարնան Նորին Սրբութիւն Ազգիս Վեհափառ Հայրապետը հրաւիրելով մեզ Ս. Էջմիածին, հրամայեց, իբրև տպարանական գործին հմուտ անձի, զննել Ս. Էջմիածնի տպարանը և մի տեղեկագիր ներկայացնել իրեն, յիշելով թէ ինչ նորանոր մեքենաներով հարկ կլիներ հարստացնել տպարանը: Հրամանը կատարելով՝ մատուցինք Նորին Օծութեան մի ընդարձակ տեղեկագիր, յիշելով մէկ առ մէկ որ անհարժեշտ են այս ու այն մեքենաները և յատկապէս մի նոր արագատիպ և նոր սիստեմի ձուլիչ, որպիսին մենք տեսած էինք 1895 թուին Բեռլինում»¹:

Մկրտիչ Ա Խրիմյան Կաթողիկոսը հավանություն տալով Աղանյանցի ներկայացրած տեղեկագրին՝ 1896 թվականի մարտի 12-ի թիվ 369 կոնդակով նրան գործուղում է Եվրոպա՝ ձեռք բերելու հիշյալ մեքենաները: Տպագրական գործի հմուտ մասնագետը սիրով և մեծ բարեխղճությամբ է կատարում Հայոց Հայրապետի հանձնարարականը և հատուկ կոնդակով արժանանում շնորհակալության: Այս մասին գրել է նաև «Արարատ» ամսագիրը, թե Խրիմյան Հայրիկի կարգադրությամբ Գյուտ քին. Աղանյանցի միջոցով շոգիով աշխատող մեքենաներ են ձեռք բերվել տպարանի համար²:

1885 թվականի դեկտեմբերի 30-ին Վրաստանի և Իմերեթի թեմի կոնսիստորիայի որոշմամբ Գյուտ քահանա Աղանյանցը նշանակվում է Թիֆլիսի հայ եկեղեցիների բարեկարգության վերատեսուչ³: Թիֆլիսի վիճակային կոնսիստորիան 1886 թվականի հունվարի 3-ին Աղանյանցին գրում է. «Հրամայեցին՝ արձակ համարելով զՀամագասպ քահանայ Տէր Յովհաննիսեանց ի պաշտօնէ հոգաբարձութեան որբոց և այրեաց հոգևորականաց, նշանակել զՁեզ»⁴:

Յոթ տարի շարունակ Աղանյանցը լռությամբ և խոնարհությամբ վարում է Կուկիո նորաշեն Ս. Աստվածածին եկեղեցու ծխատեր քահանայի պաշտոնը, սակայն երբ մեկը մյուսի հետևից վախճանվում են Վանաց Մայր եկեղեցու երեք քահանաները, Գյուտ քահանան ստիպված է լինում 1887 թվականի հունիսի 22-ին գրավոր դիմել Էջմիածնի

¹ «Լուսնայ», 1903, №1, էջ 270:

² «Արարատ», 1897, էջ 272:

³ ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 18, թ. 1-2:

⁴ ԱճԳ, գ. 15, թ. 2:

Ս. Սինոդի միջնորդությամբ՝ «Բարեհաճել առնել զտնօրինութիւն յաղագս տալոյ ինձ զամսն ի ծխոց հանգուցեալ քահանայից Վանա Մայր եկեղեցւոյ և փոխադրելոյ զիս ի յիշեալ եկեղեցին»¹, որը և կատարվում է:

Պետք է ասել, որ թե՛ Ս. Սինոդի և թե՛ վիճակային կոնսիստորիայի կողմից ինչպիսի պարտականություն էլ որ վստահվում էր Գյուտ քահանային այդ տարիներին, նա կատարում էր մեծ ջանասիրությամբ և պարտքի մեծ գիտակցությամբ՝ օժտված լինելով կենսուրախությամբ, համբերությամբ, ամուր կամքով և գործելու եռանդով: Այդ տարիներին նա կարողացավ ձեռք բերել մեծ փորձառություն տեսչական, հոգեբարձական և մանկավարժական պաշտոններում, որի համար բազմիցս պարգևատրվել է Ամենայն Յայոց Յայրապետներից: Նույնիսկ, երբ 1887 թվականի օգոստոսի 24-ին ընտանեկան հանգամանքներից ելնելով դիմում է ներկայացնում կոնսիստորիային ազատվելու համար Թիֆլիսի Յայոց եկեղեցիների բարեկարգության տեսչի պաշտոնից², դիմումը երկար ժամանակ չեն ընդունում:

1887 թվականի սեպտեմբերի 23-ին Գյուտ Աղանյանցը Ներսիսյան հոգևոր դպրոցի տեսչին դիմում է, գրելով. «Խոնարհաբար խնդրեմ ի Յոգաբարձութենեդ, եթէ արժան համարեսցիս տալ ինձ զդասս կրօնի ի պատրաստական դասարանս դպրոցիդ»³: Այդ օրվանից Ներսիսյան դպրոցում վերստին ուսուցչի պաշտոն ստանձնելով (ընդհատվել էր 1891-1901 թթ.)՝ երկար ժամանակ իր հմտությամբ և ընդհանուր պատրաստվածությամբ արդյունավետ գործունեություն է ծավալել՝ Ներսիսյան դպրոցի աշակերտությանը դասավանդելով հոգևոր առարկաներ:

1894 թվականի մարտի 12-ին Գյուտ քահանա Աղանյանցը Վրաստանի և Իմերեթի Վիճակային կոնսիստորիայի թիվ 75 հրամանով նշանակվում է «Գործակալ եկեղեցեաց Յայոց Ա մասի Տփլիսու»⁴, իսկ նույն թվականի ապրիլի 13-ին հրամանով՝ «ի պաշտօն գործակալի Արարատա ամսագրոյ»⁵:

Յոգևոր-ծխական, մանկավարժական, հասարակական լարված գործունեության այդ տարիներին Աղանյանցն ընդգրկվում է նաև թեմական բազմաթիվ հանձնաժողովների կազմում՝ դրսևորելով իր բացառիկ բարեխղճությունն ու պահանջկոտությունը, Յայ Առաքելական Սուրբ եկեղեցու սկզբունքներին հավատարիմ լինելը: Ուստի պատահական չէր, որ Վրաստանի թեմակալ առաջնորդի առաջադրմամբ երբ 1894 թվականի հոկտեմբերի 10-ին կոնսիստորիայի հրամանով Թիֆլիսի նշանավոր և վաստակաշատ քահանաներից կազմված միաբանական ժողով է ստեղծվում, որի կազմում ընդգրկվում են ավագ քահանաներ Ղևոնդ Խարազյանցը, Արսեն Բագրատունին, Եզնիկ Երզնկյանը, Սահակ Սահակյանցը, Գրիգոր Մանդակունին և ուրիշներ, Գյուտ քահանա Աղանյանցը նշանակվում է նախագահ և պատվիրվում է. «դմին տնօրինել զի նախ՝ միաբանական ժողովն գումարեսցի միշտ ի պահանջիլ հարկին ըստ հրաւիրանաց նախագահի ժողովոյ ի կատար ածեցին ոչ այլ ազգ, քան նախապես ենթարկելոյ զայնս ենթադատման և վախճանական վճռոյ Ատենիդ»⁶: Յետևաբար, վերոնշյալից կարելի է պատկերացնել, թե ինչպիսի մեծ հեղինակություն և

¹ Անդ, ք. 4:

² ՀԱԱ, ֆ. 312, ց. 1, գ. 28, ք. 8:

³ ՀԱԱ, ֆ. 316, ց. 1, գ. 28, ք. 6:

⁴ Անդ:

⁵ ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 15, ք. 9:

⁶ ՀԱԱ, ֆ. 316, ց. 1, գ. 28, ք. 10:

համակրություն է ունեցել Գյուտ քահանան, որ Վրաստանի հարյուրավոր քահանաների շարքում՝ քահանայական դասի ամենաբարձր Աստանի նախագահ է նշանակվել:

Ծանրաբեռնվածության պատճառով, իր դիմումի համաձայն 1895 թվականի մարտի 24-ին Վրաստանի վիճակային Կոնսիստորիան Աղանյանցին ազատում է Թիֆլիսի հայոց եկեղեցիների գործակալի պաշտոնից¹:

Դեռևս 1877 թվականին առաջին անգամ լինելով՝ Թիֆլիսում հրատարակվող «Փորձ» ամսագիրը հարց էր բարձրացրել, որ անցյալի մեր հիշատակարանները, հնությունները, որ մոռացության մեջ են և անմխիթար վիճակում, անհրաժեշտ է ստեղծել մի մարմին, որը զբաղվի դրանց հավաքմամբ և ուսումնասիրությամբ: Այդ նպատակի համար առաջարկվում էր հիմնել մի ընկերություն և կազմել գործունեության ծրագիր: Այդ խնդիրը տարիներ հետո նորից արծարծվում է Թիֆլիսի հայ մտավորականների կողմից, և որոշվում է մի կրոնապատմական թանգարան հիմնել Թիֆլիսի Հայոց վանքի Մայր եկեղեցու բակում՝ Առաջնորդի հովանավորության ներքո: 1897 թվականին ճանաչված բարերար Ավետիս Ղուկասյանը Խրիմյան Հայրիկի օրհնությամբ նախաձեռնում է վանքի բակում թանգարանի շենքի կառուցումը, որի բացումը կատարվում է 1900 թվականին: Խրիմյան Հայրիկի հատուկ կոնդակով՝ գրված 1900 թվականի հունիսի 15-ին, Գյուտ քահանա Աղանյանցը նշանակվում է այդ նորաստեղծ թանգարանի ցմահ նախագահ-վերահսկող²:

Իր վրա դրված բոլոր թեմական և հասարակական պաշտոններում մինչև իր կյանքի վերջին տարիները Տ. Գյուտ ավ. քին. Աղանյանցը մշտապես հոգացել է եկեղեցու պայծառության համար, շարունակ աչքի առաջ ունեցել նրա շահերը՝ աշխատելով սեր և համերաշխություն պահպանել միաբանության մեջ, թեև միշտ էլ բարի գործերի մեջ, ցավոք, անպակաս են եղել չարաբարո անհատներ, որոնց նա պատասխանել է իր ազդու և անաչառ գրչով՝ դրսևորելով իր հրապարակախոսական վառ ձիրքերը:

Գյուտ ավ. քին. Աղանյանցը մահացել է 1919 թ. դեկտեմբերին³ և թաղվել Խոջիվանքի հայոց գերեզմանատանը, որը խորհրդային կարգերի օրոք քանդվել և ավերվել է: Սակայն նրա կյանքն ու թողած գրական մնայուն հիշատակներն ընդմիշտ պիտի խոսեն և հիշեցնեն բացառիկ հոգևորականի և վաստակաշատ մտավորականի մասին:

Համառոտ ներկայացնում ենք նրա աշխատությունների թարգմանությունների և հրատարակած գրքերի ցանկը՝ ըստ հրատարակության տարեթվերի⁴: Ըստ այդմ.

1. **Հօֆման Ֆրանց**, Խաւարից դէպի Լոյս: II թարգմ. Յարութիւն դպիր Առաքելեանց: Թիֆլիս (Տիֆլիս), տպ. Հովհաննես Մարտիրոսեանցի, 1877:
2. **Հօֆման Ֆրանց**, Հաւատարմութիւնը ամէն արգելքներին յաղթում է: Թարգմ. Յարութիւն Առաքելեանց: (Գ. ք. Աղանեանց): Թիֆլիս (Տիֆլիս), տպ. Հովհաննես Մարտիրոսեանցի, 1877:

¹ Անդ, թ. 12:

² «Լուսն», 1901, գիրք Ա, էջ 348-349:

³ Աղանյանցի մահվան թվականի առնչությամբ կան տարակարծություններ. Ս. Բեիբուդյանի անձնական ֆոնդում պահվող փաստաթղթերում և Արման սրկ. Հակոբյանի ավարտաճառում Գ. Աղանյանցի մահվան թվականը նշվում է 1919-ը, այնինչ թե՛ Գառնիկ Ստեփանյանի և թե՛ Հ. Պետրոսյանի գրքերում (տե՛ս **Գառնիկ Ստեփանյան**, Կենսագրական բառարան, հատ. Ա, Երևան, 1973, էջ 68, **Հովհ. Պետրոսյան**, հայ գիտնականներ, Երևան, 1960, էջ 25, 68), ինչպես նաև հանրագիտարանում (տե՛ս ՀՄՀ, Երևան, 1974, հատ. Ա, էջ 245) նշվում է, որ նա մահացել է 1920 թվականին, որը ճիշտ չէ համաձայն Աղանյանցի անձնական ֆոնդում պահվող փաստաթղթերի (տե՛ս ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 96, թ. 1, և գ. 97, թ. 1), ըստ որոնց նա մահացել է 1919 թվականի դեկտեմբերին:

⁴ Ցանկում առանձին միավորներով ներկայացված է նաև վերահրատարակությունները:

3. **Սերվանտես Միգել**, Ղոն Քիչոտ Լամանչեցի: Թարգմ. Յարուֆին դպիր Առաքելեանց: Թիֆլիս (Տփլիս), տպ. Հովհաննես Մարտիրոսեանցի, 1878:
4. **Ռուլլեստոն Գերոզ**, (Վեպ հասակաւոր պատանիների համար): Թարգմ. Յ. սարկ. Առաքելեանցի: Թիֆլիս (Տփլիս), տպ. Հովհաննես Մարտիրոսեանց, 1879:
5. **Լակիդէ Ա.**, Երրորդ ոսկի: Առակ Ա. Լակիդէի: (Պարգեւատրուած Ս. Պետերբուրգի ֆրեօբլեան ընկ.): Թարգմ. Յարուֆին սարկաւագ Աղանեանց (Առաքելեանց): Թիֆլիս (Տփլիս), տպ. Ա. Հ. Մելիք-Շահնազարեանցի, 1879:
6. **Դէֆօ Դանիէլ**, Ռօբինզօնի պատմութիւնը: Թարգմ. Գիւտ քահ. Աղանեանց: (Թիֆլ. հայ. գրք. հրատ.): Թիֆլիս, տպ. Մովսէս Վարդանեանի, 1881:
7. Չեստերտօնի ժառանգը: Պատկերազարդ վեպ: VII թարգմ. Գիւտ քահ. Աղանեանց: Թիֆլիս (Տփլիս), տպ. Հովհաննես Մարտիրոսեանցի, 1881:
8. **Աղանեանց Գիւտ**, Աղօթատետր ի պէտս մանկանց Հայաստանեայց եկեղեցւոյ: (Հրատ. Կենտր. գրավաճառանոց): Թիֆլիս, տպ. Հովհաննես Մարտիրոսեանցի, 1884:
9. Եան Էրնստ Սնօլեար: IX թարգմ. Գիւտ քահ. Աղանեանց: Արտատպած «Արծազանք» շաբաթաթերթից: Թիֆլիս, տպ. Հովհաննես Մարտիրոսեանցի, 1885:
10. **Միսովեա**, Ակտէա: Պատմական վեպ հին յունաց եւ հռովմայեցւոց կեանքից: Թարգմ. Գիւտ քահանայի Աղանեանց: Թիֆլիս, տպ. Հովհաննես Մարտիրոսեանցի, 1885:
11. **Աղանեանց Գիւտ**, Կրօնի դասագիրք: 2-րդ տարուայ ուսումն հայոց եկեղեցական-ծխական ուսումնարանների համար: Պատկերազարդ (համաձայն Ամենայն Հայոց վեհափառ կաթողիկոսից հաստատուած ծրագրի): Թիֆլիս (Տփլիս), տպ. Հովհաննես Մարտիրոսեանցի, 1887:
12. **Աղանեանց Գիւտ**, Կրօնի դասագիրք: Երրորդ տարուայ ուսումն հայոց եկեղեցական-ծխական ուսումնարանների համար: Պատկերազարդ (համաձայն Ամենայն Հայոց վեհափառ կաթողիկոսից հաստատուած ծրագրի): Թիֆլիս (Տփլիս), տպ. Հովհաննես Մարտիրոսեանցի, 1887:
13. **Աղանեանց Գիւտ**, Կրօնի դասագիրք: Ա տարի: Բ տիպ: Վաղարշապատ: 1888:
14. **Աղանեանց Գիւտ**, Կրօնի դասագիրք: Երկրորդ տարուայ ուսումն. հայոց եկեղեցական-ծխական ուսումնարանների համար: Պատկերազարդ: Երկրորդ տպագր.: (Հրատ. Կենտրոնական գրավաճառանոցի): Թիֆլիս, տպ. Մովսէս Վարդանյանի, 1888:
15. **Աղանեանց Գիւտ**, Կրօնի դասագիրք Երրորդ տարուայ ուսումն. հայոց եկեղեցական-ծխական ուսումնարանների համար: Պատկերազարդ: 2-րդ տպագր.: (Հրատ. Կենտրոնական գրավաճառանոցի): Թիֆլիս (Տփլիս), տպ. Մովսէս Վարդանյանի, 1888:
16. **Աղանեանց Գիւտ**, Օրացոյց 1889 թուականի Քրիստոսի եւ տօնարական թուականին Ազգիս ՌՅԼԸ-1338: Յավելվածով: Թիֆլիս, տպ. Մովսէս Վարդանեանի, 1888:
17. **Աղանեանց Գիւտ**, Աղօթատետր հայոց եկեղեցական-ծխական եւ արքունի ուսումնարանների համար: 2-րդ լրացրած տպագր.: (Հրատ. կենտր. գրավաճառանոցի): Թիֆլիս, տպ. Մովսէս Վարդանեանի, 1889:
18. **Աղանեանց Գիւտ**, Դասագիրք կրօնի-ուղեցոյց հայ կրօնուսոյցների համար: Վաղարշապատ (Էջմիածին), 1889:
19. **Աղանեանց Գիւտ**, Կրօնի դասագիրք 2-րդ տարուայ ուս. հայոց եկեղեցական-ծխական ուսումն. համար: 3-րդ տպագր.: (Փոփոխ. նոր ծրագրի համեմատ: Հրատ. Կենտր. գրավաճառանոցի): Թիֆլիս, տպ. Մովսէս Վարդանյանի, 1889:

20. **Աղանեանց Գիւտ**, Օրացոյց 1890 թուականին Քրիստոսի եւ Յայկեան ՏՅՁԲ (4382) թուականին եւ տօնարական թուականին Ազգիս ՌՅԼԹ-1339: (Հրատ. «Աղբիւր» պատկերազարդ ամսագրի): Թիֆլիս, տպ. Հովհաննէս Մարտիրոսեանցի, 1889:
21. **Աղանեանց Գիւտ**, Կրօնի դասագիրք 3-րդ տարուայ ուս. հայոց եկեղեցական-ծխական ուսումն. համար: 3-րդ տպագր.: (Փոփոխված նոր ծրագրի համեմատ: Կենտր. գրավաճառ.): Թիֆլիս, տպ. Արոր, Տ. Նազարեանի, 1890:
22. **Աղանեանց Գիւտ**, Տօմար եւ տօնացոյց Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ: Հայոց թեմական դպրոցների եւ հայ եկեղեցւոյ պատօնեաների համար: Վաղարշապատ, տպ. Ս. Էջմիածնի, 1890:
23. **Աղանեանց Գիւտ**, Օրացոյց 1891 թուականին Քրիստոսի եւ Յայկեան ՏՅՁԳ-4383 եւ տօնարական թուականին Ազգիս ՌՅԽ-1340: 4-րդ տարի: (Թիֆլիսի կենտր. գրավաճառ. հրատ.): Թիֆլիս, տպ. Մովսէս Վարդանեանի, 1890:
24. **Աղանեանց Գիւտ**, Կարնոյ գաղթը: (1829-1830): Արտատպուած «Արձագանք» շքթ-ից: Թիֆլիս, տպ. Հովհաննէս Մարտիրոսեանցի, 1891:
25. **Աղանեանց Գիւտ**, Կրօնի դասագիրք երկրորդ տարոյ ուսումն. հայոց եկեղեցական-ծխական ուսումնարանների համար: 4-րդ տպագր.: (Հրատ. կենտր. գրավաճառանոցի): Թիֆլիս, տպ. Մ. Շարածեի, 1891:
26. **Աղանեանց Գիւտ**, Օրացոյց 1891 թուականին Քրիստոսի եւ Յայկեան ՏՅՁԳ-4383 եւ տօնարական թուականին Ազգիս ՌՅԽ-1340: 4-րդ տարի: (Թիֆլիսի կենտր. գրավաճառ. հրատ.): Թիֆլիս, տպ. Մովսէս Վարդանեանի, 1891:
27. **Աղանեանց Գիւտ**, Օրացոյց 1892 նահանջ թուականին Քրիստոսի եւ Յայկեան ՏՅՁԴ-4384 եւ տօնարական թուականին Ազգիս ՌՅԽԱ-1341: 5-րդ տարի: (Հրատ. կենտր. գրավաճառանոցի): Թիֆլիս, տպ. Մ. Շարածեի, 1891:
28. **Աղանեանց Գիւտ**, Օրացոյց 1893 թուականին Քրիստոսի եւ Յայկեան ՏՅՁԵ-4385 թուակ. եւ տօմար. թ. Ազգիս ՌՅԽԲ-1342: 6-րդ տարի: (Հրատ. կենտր. գրավաճառանոցի): Թիֆլիս, տպ. Մ. Շարածեի, 1892:
29. **Բողանով Մողեստ**, Արծուի մտածմունքը: Թարգմ. Գիւտ քահանայ Աղանեանցի: (Վաճառվում է կենդ. գրավաճառանոցում): Թիֆլիս, տպ. Մ. Շարածեի, 1892:
30. **Դիկկէնս Չարլզ**, Կեանքի դպրոցը: Վէպ երիտասարդների համար: Դիկկէնսի «Մարտին Չուզլվիտ» վէպից համառօտեց Ն. Բօրիսով: Թարգմ. Գիւտ քահանայ Աղանեանց: Թիֆլիս, տպ. Մ. Շարածեի, 1892:
31. **Սվետոպօլկ Չեխ**, Գիւղի սուրբը: Թարգմ. Գիւտ քահ. Աղանեանցի: (Արտատպած «Արձագանք» շաբաթաթերթից 1882, N 15: Վաճառվում է կենտրոն. գրավաճառանոցում): Թիֆլիս, տպ. Մ. Շարածեի, 1892:
32. Դիւան հայոց պատմութեան: Գիրք Ա-Բ (1780-1834): Խմբագրեց Գիւտ քահանայ Աղանեանց: Թիֆլիս, տպ. Մ. Շարածեի, 1893:
33. **Լակիդէ Ա.**, Երրորդ ոսկի: Առակ Ա. (պարզեւատրուած Ս. Պետերբուրգի ֆրէօբէլեան ընկ-ից): Թարգմ. Գիւտ քահանայի Աղանեանց: 2-րդ տիպ: Թիֆլիս Մ. Շարածեի, 1893:
34. **Աղանեանց Գիւտ**, Տօմար եւ տօնացոյց Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ հայոց թեմական դպրոցների եւ հայ եկեղեցւոյ պատօնեաների համար: 2-րդ սրբագրած տպագր.: Թիֆլիս (Տփիսիս), տպ. Մ. Շարածեի, 1894:
35. **Այնօ Ալբէր**, Քուրդի լեռան: Թարգմ. նրանս.: (Արտատպած «Փորձ» ամսագրից: Հրատ. Գիւտ քահ. Աղանեանց N 4): Թիֆլիս (Տփիսիս), տպ. Մ. Շարածեի, 1894:

36. Դիւան հայոց պատմութեան, Գիրք Գ. Սիմեոն կաթողիկոսի յիշատակարանը: Կենսագր. եւ յաւելուածներով ու ծանօթութ.: Յրատ. Գիւտ քահանայ Աղանեանց: Թիֆլիս, տպ. Մ. Շարածեի, 1894:
37. **Ճաղարեզեան Յակոբ**, Հայոց լեզու. 1-ին տարի: Դասագիրք հայոց դպրոցների համար: (Հրատ. Գիւտ քահ. Աղանեանց N 5): Թիֆլիս (Տփլիս), տպ. Մ. Շարածեի, 1894:
38. **Աղանեանց Գիւտ**, Կարգ աստուածաշտուութեան Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ: Դասագիրք թեմական եւ ծխական հոգեւոր դպրոցների համար: 2-րդ տպագր.: Կազմեց Գիւտ քահանայ Աղանեանց: Թիֆլիս (Տփլիս), տպ. Մ. Շարածեի, 1895:
39. **Սպիրի Եօհաննա**, Այծարած Մօնի: Գերմ. թարգմ. Իսահակ Յարութիւնեանց: (Հրատ. Գիւտ քահ. Աղանեանցի N 6): Թիֆլիս, տպ. Մ. Շարածեի, 1895:
40. Կիլիկիա: (Հրատ. Գիւտ քահ. Աղանեանց N 7): Արտատպած «Լոււմայ» գրական հանդեսից: Թիֆլիս, տպ. Մ. Շարածեի, 1896:
41. **Պետտալոցցի Հենրիխ**, Լինհարդ եւ Գերտրուդ: Վեպ ժողովրդի համար: Գերմ. թարգմ. Իսահակ Յարութիւնեանց: Մաս Ա: (Հրատ. Գիւտ քահանայ Աղանեանցի N 8): Թիֆլիս, տպ. Մ. Շարածեի, 1896:
42. **Պօտապենկօ Ի.**, Մի կտոր հաց: Թարգմ. Գիւտ քահ. Աղանեանց: (Արտատպած «Լոււմայ» գրակ. հանդեսից): Թիֆլիս (Տփլիս), տպ. Մ. Շարածեի, 1896:
43. **Սենկելիչ Հենրիկ**, Դէպի Աթէնք: Թարգմ. Գիւտ քահ. Աղանեանցի: (Արտատպած «Լոււմայ» գրական հանդեսից): Թիֆլիս (Տփլիս), տպ. Մ. Շարածեի, 1896:
44. **Պետտալոցցի Հենրիխ**, Լինհարդ եւ Գերտրուդ: Վեպ ժողովրդի համար: Մաս Բ: Գերմ. բնագր. թարգմ. Իսահակ Յարութիւնեանց: (Հրատ. Գիւտ քահանայ Աղանեանցի 8): Թիֆլիս (Տփլիս), տպ. Մ. Շարածեի, 1897:
45. **Աղանեանց Գիւտ**, Աղօթատետր: Հայոց եկեղեցական եւ արքունի ուսումնարանների համար: 3-րդ լրաց. կտագր.: Հրատ. կենտր. գրավաճառ.: Թիֆլիս, տպ. Մ. Շարածեի, 1898:
46. Դիւան հայոց պատմութեան, Գիրք Դ: Ղոկաս կաթողիկոս (1780-1800): Յառաջաբ. յաւելուածն եւ ծանօթութ.: Կազմեց եւ հրատ. Գիւտ Աւագ քահանայ Աղանեանց: Մի լուսանկար պատկ. եւ մի վիմատիպ կոնդակով: Ազնուատոհմ Ստեփաննոս Խ. Թումանեանցի ծախքով: Թիֆլիս, տպ. Մ. Շարածեի, 1899:
47. **Պարոնեան Յակոբ**, Երկասիրութիւններ: Ա. ծիծաղ: (Հրատ. Գիւտ քահ. Աղանեանց): Թիֆլիս, տպ. Մ. Շարածեի, 1899:
48. **Պարոնեան Յակոբ**, Երկասիրութիւններ: Բ. Արեւելեան ատամնաբոյժ: Կատակ. երգախառն ի 5 արար.: (Հրատ. Գիւտ քահ. Աղանեանց): Թիֆլիս, տպ. Մ. Շարածեի, 1899:
49. **Աղանեանց Գիւտ**, Կարգ աստուածաշտուութեան Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ: Դասագիրք թեմական եւ ծխական հոգեւոր դպրոցների համար: 3-րդ տպագր. փոփոխած, 34 նկարներով: Թիֆլիս, տպ. Մ. Շարածեի, 1900:
50. **Աղանեանց Գիւտ**, Հնից-նորից: Հնախուզական ոււելորութիւն Գիւտ ք. Աղանեանցի: Արտատպած «Լոււմայ» հանդեսից: Թիֆլիս, տպ. Մ. Շարածեի, 1900:
51. **Պարոնեան Յակոբ**, Երկասիրութիւններ: Գ. Քաղաքավարութեան վնասները: Հրատ. Գիւտ քահ. Աղանեանց: Թիֆլիս, տպ. Մ. Շարածեի, 1900:
52. Նամակագիրք: Օտար աղբիւրների հետեւողութեամբ կազմեց Գիւտ ա. քահ. Աղանեանց: Թիֆլիս, տպ. Մնացական Մարտիրոսեանցի, 1901:

53. **Աղանեանց Գիւտ**, Օրացոյց 1902 թուականին հայկեան ՏՅՂԴ թ. եւ տօմարական ՌՅԾԱ-ԾԲ: Յաւելուած Առողջապահական խոհարարութիւն պրօֆ. Զալեսկու: Կազմեց Գ. ա. ք. Աղանեանց: Թիֆլիս, տպ. Մովսէս Վարդանեանցի, 1901:
54. **Շրայնէր Օ.**, Մատուռի աւերակներում: Թարգմ. Գիւտ Ա. քահ. Աղանեանց: (Արտատպած «Լոււմայ» հանդեսից): Թիֆլիս, տպ. Տ. Մարկիանոս Ռոստինեանցի, 1901:
55. Կարգ աստուածաշտուութեան Հայաստանեայց Ա. եկեղեցւոյ: Դասագիրք թեմական եւ ծխական հոգեւոր դպրոցների համար: 35 նկարով: Կազմեց Գիւտ Աւագ քահանայ Աղանեանց: Չորրորդ տպագր.: Թիֆլիս, տպ. Մնացական Մարտիրոսեանցի, 1902:
56. Դիւան հայոց պատմութեան, Գիրք Ե. Դանիէլ կաթողիկոս (1800-1808): Յառաջաբանով, յաւելուածներով, ծանօթութիւններով եւ մի վիմատիպ ինքնագիր կոնդակով: Հրատ. Գիւտ քահանայ Աղանեանց: Թիֆլիս, տպ. Տ. Մարկիանոս Ռոստինեանցի, 1902:
57. **Շրայնէր Օ.**, Որսորդ: Թարգմ. Գիւտ Ա. քահ. Աղանեանց: (Նոր մատենադարան ԺԳ): Թիֆլիս, տպ. Տ. Մարկիանոս Ռոստինեանցի, 1902:
58. **Պօտապէնկօ Ի.**, Մի կտոր հաց: Թարգմ. Գիւտ Ա. քահ. Աղանեանց: (Արտատպած «Լոււմայ» հանդեսից): Երկրորդ տպագր.: Թիֆլիս, տպ. Մարկիանոս Տ. Ռոստինեանցի, 1902:
59. **Սենկելիչ Հ.**, Դէպի Աթէնք: Թարգմ. Գիւտ ա. քահ. Աղանեանց: (Արտատպած «Լոււմայ» գրական հանդեսից): Երկրորդ տպագր.: Թիֆլիս, տպ. Մարկիանոս Տ. Ռոստինեանցի, 1902:
60. **Աղանեան Գիւտ**, Աղօթատետր Հայոց եկեղեցական եւ արքունի ուսումնարանների համար: Կազմեց Գիւտ Ա. քահանայ Աղանեանց: Չորրորդ տպագր.: (Հրատ. կենդրոնական գրաւաճառանոցի): Թիֆլիս (Տփխիս), տպ. Տ. Մարկիանոս Ռոստինեանցի, 1903:
61. **Աղանեան Գիւտ**, Ձաքար Դարաղաճեանցի կտակը եւ «Մշակ»-ի զառացանքները: 1903:
62. **Էրկման Շատրիան**, Անտառապետ Ֆչեդերիկ: Թարգմ. Գիւտ Ա. քահ. Աղանեանց: (Արտատպած «Լոււմայ»-ից): Թիֆլիս, տպ. Տ. Մարկիանոս Ռոստինեանցի, 1903:
63. **Աղանեանց Գիւտ**, Կարգ աստուածաշտուութեան Հայաստանեայց Ա. եկեղեցւոյ: Դասագիրք թեմական, ծխական, հոգեւոր, պետական եւ քաղաքային դպչոցների համար: Կազմեց Գիւտ աւագ քահանայ Աղանեանց: Հինգերորդ տպագր. 35 նկարով: Թիֆլիս, տպ. Հերմես, 1904:
64. Դիւան հայոց պատմութեան, Գիրք Գ. Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանը: Կենսագրութեամբ եւ յաւելուածներով ու ծանօթութիւններով: Հրատ. Գիւտ քհ. Աղ.: Թիֆլիս, տպ. Մ. Շարաձեի, 1904:
65. Դիւան հայոց պատմութեան, Գիրք Զ. Դաւիթ կաթողիկոս: Մասն առաջին 1801-2: Հրատարակեց Գիւտ Աւագ քահանայ Աղանեանց: Մի վիմատիպ կոնդակով: Թիֆլիս, տպ. Տ. Ռոստինեանցի, 1904:
66. Կարա: (Իրլանդական կեանքից): Թարգմ. Գիւտ Ա. ք. Աղանեան: Թիֆլիս, տպ. Տ. Մարկիանոս Ռոստինեանցի, 1904/1905:
67. **Սրուանձտեան Գարեգին**, Գար. Ե. Սրուանձտեանի երկասիրութիւնները Ա. Համով հոտով: (Հրատ. Գիւտ ա. քահ. Աղանեանց): Թիֆլիս, տպ. Ա. Քութաթելաձեի, 1904:
68. **Աղանեանց Գիւտ**, Կարգ աստուածաշտուութեան Հայաստանեայց Ա. եկեղեցւոյ: Դասագիրք թեմական, ծխական, հոգեւոր, պետական եւ քաղաքային դպչոցների համար: Կազմեց Գիւտ Ա. քահ. Աղանեանց: Վեցերորդ տպագր. 35 նկարով: Թիֆլիս, տպ. Նվարդ Աղանեանի, 1907:
69. Դիւան հայոց պատմութեան: Գիրք Ը Սիմէոն կաթողիկոսի յիշատակարան: Մասն երկրորդ (1767-1776) մի նկարով: Հրատարակեց Գիւտ Ա. քահանայ Աղանեանց: (Հրատ. Բագուի հայոց կուլտուրական միութեան հրատարակչական մասնաճիւղի N 4 Պատմական գրքերի շար N 1): Թիֆլիս, տպ. Նվարդ Աղանեանցի, 1908:

70. Նամակագիրք: Օտար աղբիւրների հետեւողութեամբ: Կազմեց Գիւտ Ա. Բ. Աղանեանց: Բ տիպ. ճոխացրած: Թիֆլիս, տպ. Նվարդ Աղանեանցի, 1909:
71. Դիւան հայոց պատմութեան: Գիրք Է Դաւիթ կաթողիկոս: Մասն երկրորդ (1803-4): Մի գունատիպ ֆերմանով: Յառաջաբանով, յաւելուածներով եւ ծանօթութիւններով: Հրատարակեց Գիւտ Ա. Բ. Աղանեանց: Թիֆլիս, տպ. Մարկիանոս Տ. Ռոստինեանցի, Նվարդ Աղանեանցի, 1909:
72. **Աղանեան Գիւտ**, Աւետիս Դուկասեան եւ նրա կտակը: Թիֆլիս, տպ. Նվարդ Աղանեանցի, 1911:
73. Դիւան հայոց պատմութեան: Գիրք Թ. Յովսէփ կաթողիկոս Արղութեան: Մասն առաջին 1778-1800: Յավելուածներով եւ ծանօթութիւններով: Հրատարակեց Գիւտ Աղանեանց Ա. քահ. մի պատկերով եւ 4 վիմատիպ վաւերագրով: Թիֆլիս, տպ. Նվարդ Աղանեանցի, 1911:
74. **Եղիշէ**, Եղիշէի Վարդանանց պատմութիւնը: Թարգմ. Գիւտ Աղանեանց ա. ք.: (Արտատպած «Լումայ» ամսագրի 1910 թ.): Թիֆլիս, տպ. Նվարդ Աղանեանցի, 1911:
75. Դիւան հայոց պատմութեան: Գիրք Ժ. Մանր մատենագիրք ԺԵ-ԺԹ դար: Կենսագրական տեղեկութիւններով եւ ծանօթութիւններով: Հրատարակեց Գիւտ Աղանեանց Ա. քահ. Փիլիպոս կաթողիկոսի մի վիմատիպ կոնդակով: Թիֆլիս, տպ. Նվարդ Աղանեանցի, 1912:
76. Դիւան հայոց պատմութեան: Գիրք ԺԱ. Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանը: Մասն III-վերջին (1777-79): Յաւելուածներով եւ ծանօթութիւններով հրատարակեց Գիւտ Աղանեանց Ա. քահ.: Հնդկահայերի հանրագրի արտատպով: Թիֆլիս, տպ. Նվարդ Աղանեանցի, 1913:
77. Նամակագիրք: Օտար աղբիւրների հետեւողութեամբ: Կազմեց Գիւտ Ա. Բ. Աղանեանց: Երրորդ տպագրութիւն ընդարձակուած ռուսերէն բաժնով: (Հրատ. Գ. Գալստեանի N 88): Թիֆլիս, տպ. Նվարդ Աղանեանցի, 1915:
78. Դիւան հայոց պատմութեան: Գիրք ԺԳ. Հարստահարութիւններ Տաճկահայաստանում: (Վաւերագրեր 1801-1888): Յաւելուածներով, ծանօթութիւններով եւ բառգրքով: Հրատ. Գիւտ Աղանեանց Ա. քահ.: Տպուած Ազգայի բիւրոյի ծախքով: Թիֆլիս, տպ. Նվարդ Աղանեանցի, 1915:
79. **Մարտիրոսեան Հովհաննէս, Աղանեան Գիւտ**, Կրօնի դասեր: Տարրական դասըթացք: Առաջին տարի: Պատկերազարդ: Կազմեցին Յովհ. ա. ք. Մարտիրոսեան եւ Գիւտ ա. ք. Աղանեան: Առաջին տպագր.: (Համաձայն հոգեւոր իշխանութեան ծրագրի): Թիֆլիս, տպ. Նվարդ Աղանեանցի, 1915:
80. **Մարտիրոսեան Հովհաննէս, Աղանեան Գիւտ**, Հայոց եկեղեցու աստուածապաշտութեան համառօտ դասագիրք պետական եւ քաղաքային դպրոցների համար: Կազմեցին Յովհ. ա. ք. Մարտիրոսեան եւ Գիւտ ա. ք. Աղանեան: Պատկերազարդ: Առաջին տպագր.: Թիֆլիս, տպ. Նվարդ Աղանեանցի, 1915:
81. Դիւան հայոց պատմութեան: Գիրք ԺԲ: Մանուէլ Կիւմիւշխանեցի: Մասն 1. Ծանօթութիւններով հրատարակեց Գիւտ ա. ք. Աղանեանց: Մեծ Միքայէլ Յովս. Արամեանցի ծախքով: Թիֆլիս, տպ. Նվարդ Աղանեանցի, 1917:

Отец Арарат Погосян, Жизнь и деятельность протоиерея Гюта Аганянца (краткий очерк) - Эта статья о протоиерее Гюте Аганянце, который в конце 19-го и в начале 20-го веков имел свое особое и почетное место в области развития армянской культуры и арменоведения. Он жил и работал в Тбилиси. Богато и разнообразно наследие этого известного культурного деятеля, учителя, писателя, переводчика, филолога, историка, издателя, редактора, церковного и общественного деятеля. Сегодня, в условиях повышенного интереса к истории Армянской Церкви, возникает так же необходимость

исследования и оценивания продуктивной деятельности Гюта Аганянца в общем контексте общественно-политической, издательской- церковной жизни тех времен. Именно поэтому в рамках этой статьи мы решили кратко описать его много содержательную деятельность, имеющую существенную роль в изучении нового периода истории Армянской Церкви.

Fr. Ararat Poghosyan, The life and activity of Archpriest Gyut Aghanyants: (a short sketch) - The article refers to Archpriest Gyut Aghanyants who lived and worked in Tbilisi and had special and honourable place in the field of development of the Armenian culture and Armenology at the end of the 19th and at the beginning of the 20th centuries. The heritage of this famous cultural figure, teacher, writer, translator, philologist, historian, publisher, editor, ecclesiastical and public figure is rich and various. Today, in the conditions of keen interest in history of the Armenian Church, there is also a need of research and estimation of productive activity of Gyut Aganyants for the general context public and political, publishing and ecclesiastical life of those times.

For this reason within this article we decided to describe briefly his many substantial activities which have an essential role in studying of the modern period of history of the Armenian Church.

S. Արարատ քահանա Պողոսյան- Չորրորդի Հոգևոր Ճեմարանում և Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցում դասավանդում է «Հայ Եկեղեցու պատմություն» առարկան: Հեղինակ է հոդվածների, գրքերի. մասնակցել է ժողովածուների կազմման աշխատանքների, տեղական և միջազգային, համալսարանական ու միջհամալսարանական մի շարք գիտաժողովների: Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինությամբ 2013 թ. նոյեմբերի 1-ից նշանակվել է Մայր Աթոռի Սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանի տնօրեն: